ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՊԵՏ

Հ Ր Ա Մ Ա Ն

2013 թվականի ապրիլի 16-ի N 176-Ա
ք. Երևան

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԿԵՆԴԱՆԻ ԹՌՉՆԻ, ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԹՌՉՆԱՄԹԵՐՔԻ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԻՆԿՈՒԲԱՑԻՈՆ ՁՎԻ, ՄՍՈՍԿՐԱՅԻՆ ԱԼՅՈՒՐԻ, ԿԵՐԵՐԻ, ԼՐԱՑԱԿԵՐԵՐԻ, ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՂԹԵ ՊԱԼԱՐԱՅԻՆ ՏՈՒՓԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԴԻՐՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կանոնադրության 9-րդ կետի 21-րդ ենթակետով և 15-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքում արձանագրված թռչնի գրիպ (H7N9 տիպի) հիվանդության մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. 2013 թվականի ապրիլի 16-ից արգելել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծումը՝ մինչև կարանտինի չեղյալ հայտարարելը:
2. Սույն հրամանի գործողությունները չեն տարածվում մինչև 2013 թվականի ապրիլի 4-ը արտահանված վերը նշված ապրանքների վրա:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության պետ Հ. Մկրտչյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆ